Զունեմ եմ ախպօր որտին, որ քեմ կէնայ պէհն մէլիքին»։

78. Տաւիթ վէրցուց ասաց.

«Օրհնեա՛լ բարերար Աստուած,

Խնամք շատ էր մեծ թագաւորուն։

Խօրխապէր խամ[1] մի անե.

Ես եմ քրոյ մէջաց որտին, որ քեմ կէնամ պէհն մէ-
լիքին.

Ես եմ քրոյ քիւրոջ որտին, որ քեմ կէնամ պէհն մէ-
լիքին.

Ես եմ քրոյ ախպօր որտին, որ քեմ կէնամ պէհն մէ-
լիքին»։

79. Խօրխապէրն առաւաւուն էլաւ, ձին թախրմով Տաւիթի բո-
լոր ուզածներով տվեց, ասաց. «Ա՛ռ կընայ ես քե չտեսնամ.
ինչխ գիտես ըսկուն արա»։ Տաւիթ առեց ձին, գնաց գետի
ըէրան. Զէնով Յովան էլ գետափիկ էրկու մարդ խտեւէն ճամ-
խեց, ասաց. «Գնացէք տեսէք, թէ որ Տաւիթ ձիուն կօլան[2]
քաշելու ժամանակ՝ ձիու չորս ոտ գէտնէն կկտրցուցի խոյ[3],
կանայ էն ձին զաւթէ»։ Դորդ որ, Տաւիթ երբ ձին գետի մէջ
լվաց, թամքն տրեց վեր ձիուն, կօլան կքեց, ըսկրուն քեաշեց,
որ ձիու չորս ոտ չորս թիզ դէտնեն կտրաւ[4], խատաւ չում
ուր ձնկվեր։

80. Մարդեր գնացին, երենց տեսած պատմեցին Զէնով Յովա-
նին։ Մէհէր որ մեռեր էր՝ Զէնով Յովան չում էն օր ոուդ կա-
պեր էր. էս բան որ լսեց, նազարէք զալնել տվեց, տրին ուրա-
խութեն, տրին տօնախմբութեն, շատ ուրախացան։

81. Մարդ մը վազեց գնաց վեր Տաւիթի մօր Սինամ Խաթունի
էրտսին, ակընջկլայ[5] տվեց, ասաց. «Սինամ խաթուն, տիւ ինչի՞
մտեր ես եօթոտանի մէջ. էլի՛ տես որ Տաւիթ ուր խօր չտիին
խատեր ի. ուր խօր քիւռակ խէծե, թուրը կապե, տի էրթայ
վեր Մսրայ մէլիքին կռիւ»։ Տաւիթի մէր որ լսեց, թօղեց ուր
սուդն, էլաւ տիւրս Տաւիթն տեսնալու։ Իմացուցին Տաւիթին
ուր մօր գալն. Տաւիթն ձիուց վար թռաւ վազեց ուր մօր

---

1 Հոգ։ 2 Փոքրաշ։ 3 Թէ որ։ 4 Վերացաւ, բարձրացաւ։ 5 Մուժ-
տայ(!)։ Երեւի Թուրքերէն մուշտրլը բառը։ Խոյեցիք ասում են ա ն կ ա ճ-
կ ա լ է, որ ինչպէս եւ ակընճկրլայ-ն. կազմուած է հաւանօրէն ա կ ա ն ջ
եւ կ ա լ ն ու լ բառերից։ Սովորաբար մի աւետիք, մանաւանդ արու զա-
ւակի ծննդեան լուրը հաղորդելիս բ ռ ն ու մ են դիմացինի ականջը. մին-
չեւ որ սա մի նուէր է խոստանում։